ԱՊԱՄԱՐԴԿԱՅՆԱՑՄԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Սուրեն Մանուկյան

Ցեղասպանությունները կազմակերպվում են քաղաքական վերնախավի, հաճախ նաև երկրի ղեկավարության կողմից, սակայն իրագործվում են շարքային քաղաքացիների ձեռքով: Վերջիններս սպանության գործընթաց են ներգրավվում տարբեր դրդապատճառներով՝ մարդասպաններ դառնալով հիմնականում քարոզչության և գաղափարական մշակման, հրահրման արդյունքում[1]: Մարդկային զանգվածները նման ձևափոխման ենթարկելու կարևորագույն միջոցներից է «զոհերի ապամարդկայնացման» նպատակաուղղված գործընթացը:

Հոգեսոցիալական զարգացման տեսության հայտնի ներկայացուցիչ Էրիկ Էրիկսոնը նշում է, որ որոշ ազգեր առասպելականացնում են իրենք իրենց ժամանակի և տարածության մեջ՝ տիեզերքի կենտրոնում դնելով սեփական ազգը, մյուս ազգերին հաղորդելով նվազ կարևոր մարդկային հատկանիշներ: Սպառնալիքների ժամանակ սեփական ընտրյալության գաղափարն ուժգնանում է այլ տեսակների կողմից սպասվող վախի և ատելության հետևանքով: Այս ամենը ստիպում է խորհել ու գործել պատերազմի կամ նվաճումների միջոցով ուրիշներին ոչնչացնելու կամ «իրենց տեղը ցույց տալու» զգացման հրամայականով[2]: Այս պարագայում «մարդիկ կորցնում են մեկ տեսակ լինելու զգացումը և սկսում են ընկալել այլոց իբրև մահացու վտանգ ներկայացնող տեսակներ, ում կարելի է հաշվի չառնել, ովքեր նույնիսկ մարդ էլ չեն... Կարելի է ոչնչացնել առանց զգացում ունենալու, որ սպանում ես քո տեսակի ներկայացուցիչներին»[3]: Օրինակ, հրեաները երկար ժամանակ Եվրոպայում ընկալվում էին իբրև օտարներ, նույնիսկ չարիք ու դիվային արարածներ: Եվ այս՝ դարերով եկած հակասեմականությունն այնքան խորն էր ներկայացված եվրոպական մշակույթների մեջ, որ նացիստներին անհրաժեշտ էր ընդամենը վեր հանել այդ հին կարծրատիպերը և արդյունավետ ներհյուսել սեփական քարոզչության մեջ, ինչից հետո հրեաները սովորական գերմանացու աչքերում սկսում էին ընկալվել որպես մարդկային ավելի ցածր տեսակ, ինչն իր հերթին օգնում էր ավելի հեշտությամբ կազմակերպել նրանց սպանության գործընթացը:

Եթե ամերիկացի սոցիոլոգ Էրիկսոնը խոսում է որոշ այլ ազգերին ավելի ցածր մարդկային հատկանիշներ շնորհելու մասին, ապա հայտնի ցեղասպանագետ Լեո Կուպերը նշում է, որ ցեղասպանությունն ինքնին «մարդկային կարգավիճակի

---

[1] Այս գործընթացի մասին մանրամասն տե՛ս Մանուկյան Ս., Նախապատրաստելով ցեղասպանությունը: Ցեղասպանական միջավայրի ձևավորումը Օսմանյան կայսրությունում, *Ցեղասպանագիտական հանդես*, 3 (1-2), 2015, էջ 42-56:

[2] Erikson K., On Pseudospeciation and Social Speciation, in *Genocide, War, and Human Survival* (eds. Strozier Ch. and Flynn M.,), Lanham, Md., Rowman and Littlefield, p.51-52, ըստ Waller J., Becoming Evil: How Ordinary People Commit Genocide and Mass Killing, Oxford University Press, 2007, p. 206:

[3] Hall E., A Conversation with Erik Erikson, Psychology Today, June 1983, p.30 ըստ Waller, նշվ. աշխ., p.206:

ժխտումն է», քանի որ դա «հանցագործություն է հավաքականության» կամ «խմբի դեմ որպես այդպիսին», երբ ի սկզբանե մարդկանց սպանում են՝ առանց հաշվի առնելու նրանց անձնական հատկանիշները: Տեղի է ունենում «մարդկային անհատականության և կարևորության ժխտում», քանի որ սպանությունն իրականացվում է ոչ թե կույր ատելությամբ, այլ հեռահար նպատակներով, երբ ընթացքում զոհերը ստանում են զուտ գործիքային դեր [նրանց սպանում են ինչ-որ նպատակի հասնելու համար][4]:

Այս ամենը չափազանց կարևոր է, քանի որ մարդկային հասարակությունների դարավոր էվոլյուցիայի ընթացքում ձևավորվել են այլ մարդու սպանելու բարոյական և հոգեբանական արգելքներ: Սա մարդկային հասարակության կեցության հիմնարար և համընդունելի նորմերից է: Հետևաբար՝ մարդուն սպանելու այս արգելքը հաղթահարելու համար ոճրագործություն նախաձեռնողները և ծրագրողները հաճախ զրկում են հավանական զոհին, թիրախ խմբին մարդկային հատկանիշներից կամ լիարժեք մարդ լինելու իրավունքից: Պատմության ընթացքում այս հնարքը բազմաթիվ անգամներ է կիրառվել: Այսպես, Հին Հունաստանում հույները համարում էին, որ այլազգիները, իրենց բնորոշմամբ «բարբարոսները» և, առավել ևս ստրուկները, լիարժեք մարդիկ չէին: Նույն վերաբերմունքն ունեին եվրոպացի գաղութարարներն Աֆրիկայի, Ասիայի կամ Ամերիկայի տեղաբնիկների նկատմամբ, երբ սեփական առաքելությունը համարում էին այդ ժողովուրդներին քաղաքակրթելը՝ վերջիններիս «լիարժեք մարդ» դարձնելը:

Այդ՝ մարդկային հատկանիշներից զրկելու գործընթացը տարածվում էր ամբողջ խմբի վրա, և նրա բոլոր անդամներին վերագրվում էին նույն [բացասական կամ ոչ լիարժեք մարդկային-Ս. Մ] հատկանիշները, նրանք բոլորը հավասարապես մեղավոր կամ վտանգավոր էին ընկալվում[5]:

Պրոֆ. Գրեգորի Սթենթոնը, իր հայտնի «Ցեղասպանության փուլերի» տեսությունում[6] խոսելով «ապամարդկայնացման» գործընթացի մասին, նույնպես նշում է այս՝ սպանության նկատմամբ մարդկային բնական արգահատանքը հաղթահարելու համար օգտագործվող ցեղասպանությունների փուլերից մեկի մասին[7]:

Գերմանացի փիլիսոփա և հոգեվերլուծաբան Էրիխ Ֆրոմը նույնպես իր

---

[4] Kuper L., Genocide: Its political use in the Twentieth Century, pp 86–87, Matthäus J., Shaw M., Bartov O., Bergen D. & Bloxham D., Donald Bloxham, The Final Solution: A Genocide, (Oxford: Oxford University Press, 2009), *Journal of Genocide Research*, Vol.13, No.1-2, 2011, p.126.

[5] McCauley C., Psychological Foundations, Will Genocide Ever End?, Paragon House, St.Paul, MN, 2002, p.80.

[6] Հայտնի ցեղասպանագետ, պրոֆեսոր Գրեգորի Սթենթոնը «Ցեղասպանության 8 փուլերը» վերնագրով մի զեկուցագիր ներկայացրեց 1996 թ. ԱՄՆ Պետքարտուղարությունում, որում նա փորձ էր կատարել ուրվագծել ցեղասպանությունների (տվյալ դեպքում հիմնականում Ռուանդայի ցեղասպանության) զարգացման փուլերը: Հետագայում նա զարգացրեց իր տեսությունը և դասական 8 փուլերին (դասակարգում, սիմվոլացում, ապամարդկայնացում, կազմակերպում, բևեռացում, նախապատրաստում, բնաջնջում և ժխտում) ավելացրեց ևս երկուսը (խտրականություն և հալածանք):

[7] Stanton Gregory, “The Eight Stages of Genocide,” www.genocidewatch.org/aboutgenocide/8stagesofgenocide.html.

«Մարդու անատոմիական ապակառուցողականությունը» աշխատության մեջ ընդգծում էր, որ մարդիկ դժկամությամբ են մասնակցում իրենց խմբի անդամի սպանությանը: Սակայն կարելի է այդ պատնեշը հաղթահարել՝ տարանջատելով մարդկանց որոշակի հանրույթին ամբողջ խմբից: Բոլոր կառավարությունները, ըստ Է.Ֆրոմի, փորձում են սեփական ազգի մեջ տարածել այն մտայնությունը, որ թշնամին մարդկային էակ չէ, օրինակ՝ խուսափելով օգտագործել հակառակորդի իսկական անունը, հորինելով նոր, վիրավորական դիմելաձևեր: Գերմանացիներն Առաջին աշխարհամարտի ժամանակ ֆրանսիացիներից ստացել էին «բոշեր», իսկ բրիտանացիներից՝ «հոներ» մականունները: Ամերիկյան զինվորները Վիետնամական պատերազմում հակառակորդին անվանում էին «գուքեր», ինչն ասիական ծագմամբ մարդկանց քամահրական բնորոշումն է[8]: Առաջին աշխարհամարտի ժամանակ տարածվող քարոզչական բացիկներում հակառակորդները միմյանց ներկայացնում էին կենդանիների[9], արյունախում-պարազիտների[10] դերում՝ փորձելով հանրային գիտակցության մեջ զրկել նրանց մարդկային կերպարանքից: Օսմանյան կայսրությունում քրիստոնյաներին «գյավուր»[11] էին անվանում:

Հայտնի հոգեբան Հերբերտ Քելմանը քննարկում է երեք գործոն, որոնք նվազեցնում են բռնությունը զսպող ուժերը՝ թույլտվություն (authorization), ռութինիզացիա (routinization) և ապամարդկայնացում: Առաջին երկու գործոնները ծառայում են կատարած գործողությունների համար անհատական պատասխանատվության նվազեցմանը, մինչդեռ ապամարդկայնացումը զոհին բոլորովին դուրս է դնում մարդկային էակների համար բնական պաշտպանությունից[12]:

Էրիխ Ֆրոմը բերում է մի օրինակ, երբ վիետնամական պատերազմում կատարած ոճրագործությունների, մասնավորապես բազմաթիվ կանանց, երեխաների և քաղաքացիական անձանց սպանության համար հարցաքննվող ԱՄՆ զինված ուժերի լեյտենանտ Քելին ինքնարդարացման համար պնդեց, որ ինքը վարժեցված էր ընկալել վիետնամցի զինվորականներին ոչ թե իբրև մարդկանց, այլ ուղղակի որպես «թշնամիների»: Նույն սկզբունքով գործում էր նաև Հիտլերը՝ անվանելով «ոչ արիացիներին» «Untermenschen» («մարդկային էակներից ցածր»), «ոչ լիարժեք մարդիկ»[13]:

Այսպես, փաստորեն ջնջվում են մարդասպանության նկատմամբ գոյություն ունեցող բարոյական արգելքներն ու պատնեշները: Երբ զոհերն այլևս չեն ընկալվում որպես մարդկային էակներ, ոճրագործ հասարակությունը դադարում է զոհին հա-

---

8 Fromm E., The Anatomy of Human Destructiveness, Holt, Rinehart and Winston, NY, 1973, p.121.

9 ՀՑԹԻ Գիտական ֆոնդեր, Բ-13, 4321, 4304 /1/, 4304 /2/, 2279, 564, 3803:

10 ՀՑԹԻ Գիտական ֆոնդեր, Բ-13, 3246, 3250, 3973-3976, 2019, 3837:

11 Գյավուր (նաև գյաուր, գավուր) (թուրքերեն՝ gâvur), թուրքերի կողմից ոչ մուսուլմաններին անվանելու արհամարհական ձև, որը հաճախ կրում է կամ ստորացուցիչ իմաստ: Բառացիորեն նշանակում է անհավատ:

12 Kelman H., Violence Without Moral Restraint: Reflections on the Dehumanization of Victims and Victimizers, *Journal of Social Issues*, 1973, vol. 29, no. 4, pp. 25-61, Kelman H. and Hamilton V., Crimes of Obedience, New Haven: Yale University Press, 1989.

13 Fromm E., The Anatomy of Human Destructiveness, Holt, Rinehart and Winston, NY, 1973, p.122

մարել արժանի կարեկցանքի, համակրանքի, ներողամտության կամ այլ զգացումի, որ կարելի է տածել մարդկանց հանդեպ: Անձի հասարակական ինքնությունը սոցիալական սանդղակում նվազեցվում է մի քանի աստիճանով[14]: Ապամարդկայնացումը նաև թույլ է տալիս խզել զոհ խմբի հետ գոյություն ունեցող բոլոր կապերը:

Այս ամենն իր հերթին հեշտացնում է սպանությունը, քանի որ թիրախն ապամարդկայնացման հետևանքով կորցնում է մարդկային հատկանիշները, անհատականությունն ու սկսում ընկալվել իբրև կենդանի (կապիկ, առնետ, շուն), միջատ (տզրուկ, խավարասեր) կամ վնասարար և վտանգավոր ինչ-որ երևույթ (վիրուս, բացիլ, հիվանդություն ծնող մանրէ, վնասատու, քաղցկեղ):

Որոշ կրոններում և հասարակություններում ապամարդկայնացման դրսևորում կարելի է համարել նաև զոհերին «անհավատներ» անվանելը, քանի որ դա փաստացի նրանց լիարժեք մարդկային հատկանիշներից զրկել էր նշանակում: Այսպես, Ինդոնեզիայում 1965 թ.[15] հակակոմունիստական արշավի ժամանակ կոմունիստները հայտարարվեցին «հակակրոնական և անաստված», ինչպես նաև «սատանաներ»[16]: Պակիստանցի սպաները Բանգլադեշում իրականացրած վայրագությունների ընթացքում բենգալացիներին անվանում էին «անհավատներ և հինդուներ»[17]:

Զոհ խմբի ներկայացուցիչների նմանեցումը կենդանիներին

Որոշ կենդանիների հետ թիրախ խմբի անդամներին նույնացնելը չափազանց տարածված երևույթ էր ցեղասպանությունների ընթացքում:

Օսմանյան կայսրությունում հայերը և մյուս քրիստոնյա հպատակները դարեր շարունակ արհամարհական և նվաստացուցիչ վերաբերմունքի էին արժանանում. նրանք երկրորդ կարգի մարդիկ էին համարվում[18]: Բրիտանացի ազգագրագետ Ուիլյամ Ռամսին, ով հետազոտություն իրականացնելու ընթացքում երկար տարիներ էր անցկացրել Թուրքիայում՝ նկարագրելով թուրքերի քրիստոնյաների նկատմամբ վերաբերմունքը, նշում է. «Թուրքական իշխանությունը... նշանակում էր ծայրահեղ արհամարհանք... Հայերը (և հույները) [նրա համար] շներ ու խոզեր էին»[19]:

---

[14] Dictionary of genocide, ed. Totten S. and Bartrop P., Greenwood, 2007, p.103

[15] 1965-66 թթ. Ինդոնեզիայում տեղի ունեցան կոմունիստների, նրանց հարողների և համակիրների, ձախակողմյան քաղաքական գործիչների, ինչպես նաև էթնիկ չինացիների զանգվածային սպանություններ: Զոհերի թիվը, ըստ տարբեր տվյալների, հասնում է 500 հազարից մեկ միլիոն մարդ (Century of Genocide: Critical Essays and Eyewitness Accounts, Samuel Totten, William S. Parsons, Israel W. Charny, Garland Publishing, NY, 1997, pp. 233-262).

[16] Gerlach Ch., Extremely Violent Societies: Mass Violence in the Twentieth-Century World, New York, Cambridge University Press, 2010, p.44.

[17] Gerlach Ch., նույն տեղում, էջ.130:

[18] Դրա մասին մանրամասն տե՛ս Մանուկյան Ս., Հայոց ցեղասպանության ժամանակ զանգվածային մասնակցության «մշակութային նախադրյալները», *Ցեղասպանագիտական հանդես*, 4(1), 2016, էջ 151-176:

[19] Ramsay W., Impressions of Turkey During Twelve Years' Wanderings, *New York, 1897, pp. 206-07* in Dadrian V., The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to

Քրիստոնյաների նկատմամբ հաճախ կիրառվող անարգանքը «շուն» անվանումն էր: Մորգենթաուն նշում է, որ տարածված եզրը, որ օգտագործում էր թուրքը քրիստոնյայի հասցեին, «շունն» էր, և նրա գնահատմամբ սա ոչ միայն այլ խմբին տրված որոշակի պիտակ էր: Թուրքը փաստորեն քրիստոնյա դրացի ժողովուրդներին դիտարկում էր որպես ավելի քիչ արժանիքներ ունեցող, քան իր ընտանի կենդանիները[20]: Նույնը հաստատում էր ռուսական արքունի խորհրդական Ալ.Լևիցկիի հաղորդումը. «…մուսուլմանների ատելությունը նրանց [հայերի] հանդեպ չի դադարում և ամեն առիթով «գյավուր» հայհոյանքի հետ այդ ատելության դրսևորումը, մանավանդ գյուղերում, երևում է հնչող այն խոսքերից, թե «սպիտակ կամ սև շուն» իրենց համար մեկ է, այսինքն՝ հույները թե հայերը միևնույն քրիստոնյաներն են»[21]: Խարբերդում գործող դանիացի միսիոներուհի Մարիա Յակոբսենը, նկարագրելով Մեզրե գնացող թուրքերին և քրդերին, գրում էր. «Երբեք տեսած չեմ կատաղի և վայրի տեսք ունեցող նման մարդիկ: Նոյնիսկ իրենց պզտիկ տղաքը, ինքզինքնուն հասուն մարդու ձևեր կու տային ու մեր ետևէն կը պոռային՝ կեավո՛ւր, քրիստոնեայ շուն...» [22]:

Այս արտահայտությունները ոչ միայն զրկում էին զոհին մարդկային հատկանիշներից, այլև վիրավորում և նսեմացնում էին նրան, քանի որ խոզերն ու շներն իսլամում ավանդաբար համարվում էին «հարամ», ոչ մաքուր կենդանիներ[23] :

Զոհերին կենդանիների հետ նույնացնելը միայն Հայոց ցեղասպանության պարագայում բնորոշ չէր: Այսպես, Ռուանդայի ցեղասպանության ժամանակ ոճրագործները՝ հութուները, իրենց զոհերին՝ թութսիներին, անվանում էին «խավարասերներ»՝ դրանով իսկ թութսիների ոչնչացումը դրական գործողություն դարձնելով: Հութուների քարոզչությունը հռչակում էր. «Խավարասերը կյանք է տալիս մեկ այլ խավարասերի… թութսին միշտ նույնն է մնում»[24]: Ռուանդայի ցեղասպանության ականատես, դպրոցական ուսուցիչ Էդիթ Ուվանյիլիգիրան հետևյալ դրվագն է

---

the Caucasus, Berghahn Books, 2003, p.158.

[20] Morgenthau H., Ambassador Morgenthau's Story, Garden City, New York: Doubleday, Page & Company, 1919, p. 276.

[21] АВПРИ, Посольство в Константинополе, д. 3184, п. 146, ըստ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում (խմբ. Ներսիսյան Մ., Սահակյան Ռ.,), Երևան, «Հայաստան», 1991, էջ. 119:

[22] Ճէքըպսըն Մ., Օրագրութիւն, 1907-1919, Խարբերդ, Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, Անթիլիաս, 1979, էջ 171:

[23] Օրինակ՝ մուսուլմանի աղոթքը չի ընդունվում, եթե աղոթողի կողքով շուն է անցնում: Նման վերաբերմունքի պատճառները բացատրվում են այն հանգամանքով, որ շները միջնադարում Մերձավոր Արևելքում տարբեր հիվանդությունների տարածման պատճառ էին, իսկ մեկ այլ բացատրությամբ իսլամը շան նկատմամբ անբարենպաստ դիրքորոշում որդեգրեց, քանի որ եկավ փոխարինելու զրադաշտականությանը, որտեղ այս կենդանու նկատմամբ շատ դրական վերաբերմունք կար: Պետք է սակայն նշել, որ իսլամում շների նկատմամբ դիրքորոշումը որոշ չափով երկակի է, և իսլամական տարբեր հոսանքներում, այդ թվում՝ Ղուրանում և հադիսներում, հանդիպում են նաև շների դրական բնորոշիչները: (Մանրամասն տե՛ս, օրինակ՝ Berglund J., Princely Companion or Object of Offense? The Dog's Ambiguous Status in Islam, *Society & Animals, No.* 22, 2014, pp.545-559.

[24] Des Forges A., Leave None to Tell the Story Genocide in Rwanda, 1999, p.73

ներկայացնում. «…երբ նախագահի ինքնաթիռը վթարի ենթարկվեց[25], երեք օր անց ռադիոկայանները մեզ արգելեցին տնից դուրս գալ: Դրանից հետո չգիտեինք, թե ինչ ճակատագիր է սպասվում մեզ: Մեր տարածաշրջանի հութուները նույնպես անորոշության մեջ էին: Մեզ նման նրանք էլ սպասում էին: Հետո մենք լսեցինք բուրգոմիստերներին, ոստիկանությանը, տեղական պաշտոնյաներին, ովքեր, շրջելով անտառներում, տարբեր հրամաններով խրախուսում էին գյուղացիներին. «Ի՞նչն է խանգարում ձեզ սպանել այս թութսիներին, ինչպե՞ս նրանք վարվեցին Կիգալիում: Նրանք խավարասերներ են: Թութսիների համար այլ բան չի մնում, դուք պետք է սպանեք նրանց ցանկացած ձևով, որով կարող եք, նրանք թունավոր օձեր են, և հիմա եկել է նրանցից ազատվելու ժամանակը: Ոչ ոք դրա համար չի պատժվելու»: Այդ նույն ժամանակ «ինտերահամվեն»[26] և զինվորները Գակո զորամասից ներգրավվեցին առաջին սպանությունների մեջ այն տներում, որոնց վրա ներկով նշաններ էին արված: Հինգ օրից մեր հութու ընկերները շրջվեցին նախկին թութսի բարեկամների դեմ»[27]: Աչե հնդկացիների սպանությանը մասնակցող պարագվայցիները[28] նրանց անվանում էին «գուայակի»՝ կատաղած առնետներ[29]: Գերմանացի բազմաթիվ գաղութարարների և սպաների համար աֆրիկյան տեղաբնիկները «բաբուիններ» էին, նրանք մարդ չէին համարվում, նրանց սպանությունը չէր առաջացնում այն նույն զգացումները, որոնք կառաջանային մարդու սպանության դեպքում: Առավել ևս, այս վայրի կենդանիներին [ապստամբ ցեղերին] կարելի էր ոչնչացնել, երբ վերջիններն ի ցույց էին դնում իրենց գազանային էությունը: Ավելին, սա ընկալվում էր իբրև բարի գործ խաղաղասեր բնակչության [առավել հնազանդ ցեղերի] համար[30]:

Հոլոքոստի ժամանակ գերմանական համակենտրոնացման ճամբարներում հրեաներին անվանում էին «Haftlinge» (կալանավոր), իսկ երբ խոսքը վերաբերում էր սնունդ ընդունելուն, կիրառում էին «fressen», ինչն ավելի օգտագործելի էր անասունների պարագայում: Երբ խոսվում էր գազախցիկներից սպանված հրեաների մարմինները հանելու մասին, նույնիսկ գրագրության մեջ գործածվում էին ոչ թե դիակներ, այլ «Figuren» (թվեր կամ կտորներ), բեռ, ապրանք բառերը[31]:

---

[25] Խոսքը 1994թ. ապրիլի 6-ին Ռուանդայի նախագահ Յուվենալ Հաբյարիմանայի ինքնաթիռի վթարի մասին է, որը և ազդանշան հանդիսացավ՝ ցեղասպանությունը սկսելու համար:

[26] Ինտերահամվեն ռազմականացված կազմակերպություն էր՝ կապված Ռուանդայում կառավարող Ժողովրդավարության և զարգացման ազգային հանրապետական շարժում կուսակցության հետ: Ակտիվորեն ներգրավված էր Ռուանդայի ցեղասպանության իրականացման մեջ:

[27] Hatzfeld Jean, Into the Quick of Life, the Rwandan Genocide: The Survivors Speak, trans. Gerry Feehily (London: Serpent's Tale, 2005), p 119 cf. Fletcher L., Turning interahamwe: individual and community choices in the Rwandan genocide, Journal of Genocide Research, Vol.9, No.1, 2007, p.46, fn.64

[28] Խոսքը 1960-70-ականներին Պարագվայի տարածքում բնակվող Աչե ցեղախմբի նպատակաուղղված ոչնչացման քաղաքականության մասին է:

[29] Sereny G., Into That Darkness, New York: Vintage Books, 1983, p.201, Wolf E., Killing the Aches in Genocide in Paraguay, (ed.Arens R.), Philadelphia: Temple University Press, 1976, p.53.

[30] Century of Genocide, Eyewitness Accounts and Critical Views, p.25.

[31] Lanzmann C., Shoah: The Complete Text of the Acclaimed Holocaust Film, New York, Da Capo press, 1985, pp.92-93 ըստ Waller W, նշված աշխ., էջ.207:

Հետաքրքիր օրինակ է բերում Յեհուդա Բաուերն իր գրքում՝ նկարագրելով Գեստապոյի պաշտոնյայի խոսքերը Վարշավայի Հրեական խորհրդի ներկայացուցչին. «Դու մարդ չես, դու շուն չես, դու հրեա ես»[32]:

Թունատրում[33]

Ցեղասպանագիտության մեջ վերջին տարիներին ներմուծվել է նոր բառեզր՝ Toxification[34]՝ «թունատրում», ցեղասպանության ժամանակ ապամարդկայնացման գործընթացն ավելի ճշգրիտ բացահայտելու համար: Այն համարվում է ապամարդկայնացման ծայրահեղ ձև, ցեղասպանության մասին նախազգուշացնող ավելի հստակ նշան: Եզրի հեղինակ Ռիանոն Նիլսենը պնդում է, որ եթե ապամարդկայնացումն ազդանշում է, որ որոշակի խմբի անդամներին սպանելը թույլատրելի է, ապա թունատրումը թիրախ խմբի ներկայացուցիչների սպանությունը համարում է անհրաժեշտություն:

Այս տեսության հեղինակները նաև շեշտում են, որ ապամարդկայնացման դրսևորումներ կան նաև «ամենօրյա հասարակական ընկալման մեջ և կարող է առաջանալ նույնիսկ ինտենսիվ հակամարտության կամ ագրեսիայի բացակայության դեպքում»[35]: Օրինակ՝ այն հանդիպում է կանանց, ներգաղթյալների, փախստականների և անտունների նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքում[36]: Նրանց կողմից բերված մեկ այլ օրինակում նշվում է տղամարդկանց կողմից կանանց ապամարդկայնացման մասին, երբ վերջիններն ընկալվում են որպես միջոցներ և գործիքներ[37] և ոչ թե տղամարդկանց համարժեք: Այս և ավելի շատ օրինակներ բերելով՝ հեղինակները պնդում են, որ ապամարդկայնացման այս օբյեկտները, այնուամենայնիվ, զանգվածաբար որպես խումբ չեն ոչնչացվում[38]: Մելբուռնի համալսարանի պրոֆեսոր Նիկ Հասլամը նաև պնդում է, որ «կենդանիների կամ մեքենաների հետ նույնացվելը կամ մարդկային հատկանիշների կամ զգացմունքների ժխտումը պարտադիր չէ, որ բացասական հետևանքներ ունենան»[39], դա պարզապես թույլ է տալիս ղեկավարներին դժվար որոշումներ կայացնել, հարվածներ հասցնել և մահվան ուղարկել քաղաքացիական թիրախ խմբի ներկայացուցիչներին: Թեև վերոհիշյալ խմբերը բախվում են նախապաշարման, հալածանքների

---

[32] Bauer Y, The Holocaust in Historical Perspective, Seattle: University of Washington Press, 1978, p.8

[33] Բառի համարժեք հայերեն տարբերակը որոշելու համար շնորհակալություն Հայաստանում Ամերիկյան համալսարանի դասախոս Դավիթ Իսաջանյանին:

[34] Neilsen R., “Toxification” as a more precise early warning sign for genocide than dehumanization? An emerging research agenda, Genocide Studies and Prevention: An International Journal, Vol. 9, Iss. 1, 2015, pp. 83-95, Williams T., & Neilsen R., They will rot the society, rot the party, and rot the army: Toxification as an ideology and motivation for perpetrating violence in the Khmer Rouge genocide?, Terrorism and Political Violence, 2016, pp.1-22.

[35] ըստ Neilsen R., Toxification as a more precise early warning sign for genocide than dehumanization, p.86:

[36] նույն տեղում:

[37] նույն տեղում:

[38] նույն տեղում:

[39] նույն տեղում:

և հաճախ բռնության են ենթարկվում, սակայն ամեն դեպքում ցեղասպանական մտադրություններ նրանց նկատմամբ չեն դրսևորվում[40]:

Այսպիսով, թեև ցեղասպանությունները հազվադեպ են տեղի ունենում ապամարդկայնացման բացակայության պայմաններում, այս վերոնշյալ օրինակները, որ բերում են հոդվածի հեղինակները, ընդգծում են, որ ցեղասպանությունը պարտադիր չէ, որ սկսվի ապամարդկայնացումից, և դրա օգտակարությունը՝ որպես զանգվածային սպանությունների վաղ ահազանգման ցուցիչ, կարող է վիճարկվել[41]:

Հայտնի ցեղասպանագետներ Ջեյմս Ուոլլերը և Իսրայել Չառնին նույնպես նշում են, որ անհրաժեշտ է քննարկել մի ավելի զարհուրելի երևույթ, քան ապամարդկայնացումն է, որը ցույց կտա մարդկանց կյանքը խլելու մտադրությունը[42]: «Թունատրում» (Toxification) եզրույթի հեղինակները հենց այս գործողության մեջ են տեսնում ապամարդկայնացման այդ ավելի ահագնացող փուլը: Թունատրումը թիրախային խմբի ընկալումն է ոչ միայն իբրև անմարդկային և օտար, այլև սպառնալիք, որի այս վտանգավոր գործունեությունը կարելի է կանխել միայն ոչնչացնելով[43]: Այս տեսության կողմնակիցներն այս փուլին են նմանեցնում ոճրագործների կողմից օգտագործվող բժշկական հոետորաբանությունը կամ պետությունն ու հասարակությունը մաքրելու գործընթացի հետ կապված բառապաշարը[44]:

Այսպես, 1933-1945թթ. նացիստական Գերմանիայի քարոզչության նախարար Ժոզեֆ Գեբբելսն ընդգծում էր ոչ միայն այն միտքը, որ հրեա ժողովուրդը վարակիչ խոց է, որին պետք է վերացնել, այլ նաև այն հրատապությունը, ինչի համար պետք է դա անել. «Մեր խնդիրն այստեղ վիրաբուժական է... կտրուկ միջամտություն, կամ մի օր Եվրոպան կվառվի հրեական հիվանդության պատճառով»[45]:

Բժշկական եզրաբանության կիրառում

Ապամարդկայնացման կամ արդեն իսկ թունատրման տարածված եղանակ է բժշկական եզրույթների օգտագործումը՝ որպես թիրախավորված համայնքի համատարած ոչնչացման հիմնավորում: Ախտահանման և վիրաբուժական անդամահատման հայեցակարգը կիրառվում է որպես հասարակությանը հիվանդությունից բուժելու միջոց[46]:

Այս բառապաշարը Հայոց ցեղասպանության պարագայում չափազանց տարածված էր նաև այն պատճառով, որ երիտթուրքական վերնախավում զգալի տեղ ունեին մասնագիտությամբ բժիշկները, ովքեր իրենց համար հանրածանոթ եզրաբանությունը կիրառում էին նաև քաղաքական գործունեության մեջ: Երիտթուրքական կուսակցության առաջին բջիջը ստեղծվել էր Կ.Պոլսի Թագավորական բժշկա-

---

40 նույն տեղում:
41 նույն տեղում:
42 նույն տեղում:
43 նույն աշխ., էջ 87:
44 նույն աշխ., էջ 88:
45 նույն աշխ., էջ 89:
46 Dadrian V., The Role of Turkish Physicians in the World War I Genocide of Ottoman Armenians, Holocaust and Genocide Studies, vol. 1, no. 2, 1986, p.177.

կան ակադեմիայում: Հենց բժշկական դպրոցներից էին երիտթուրքերը ներշնչվել կենսաբանական նյութապաշտական գաղափարախոսությամբ[47]: Տոգորված սոցիալ-դարվինիզմի գաղափարներով՝ թուրքական էլիտան ընկալում էր իրեն իբրև «հասարակության բժիշկը», միակը, ով կարող էր լուսավորել մարդկային զանգվածներին[48]: Բժշկական կրթություն ունեին երիտթուրք առաջնորդներ Նազիմը, Բեհաեդդին Շաքիրը, Մեհմեդ Ռեշիդը:

Հետաքրքիր է, որ սեփական գործողություններին բժշկագիտական հիմնավորում տալով՝ երիտթուրք ոճրագործները միաժամանակ գիտակցում էին մարդկային և մասնավորապես բժշկական բարոյականության տեսակետից գործած արարքների հանցավորությունը, սակայն նշում էին, որ նախընտրում են առաջին հերթին գործել իբրև քաղաքական գործիչ և ոչ թե բժիշկ: Այսպես, Հայոց ցեղասպանության ամենաեռանդուն կազմակերպիչներից մեկը՝ երիտթուրք բժիշկ, Դիարբեքիրի նահանգի վալի Մեհմեդ Ռեշիդը, հայտարարել էր Իթթիհաթի գլխավոր քարտուղար Միդհատ Շուքրու /Բլեդա/-ին. «Չնայած ես բժիշկ եմ, ես չեմ կարող անտեսել իմ ազգությունը: Ես այս աշխարհ եմ եկել իբրև թուրք: Իմ ազգային նույնականացումը գերադասելի է ամեն ինչից: Հայ դավաճանները տեղ են արել հայրենիքի ծոցում: Նրանք վտանգավոր մանրէներ են: Արդյո՞ք բժշկի պարտքը չէ ոչնչացնել այդ մանրէները: Կամ հայերը կվերացնեն թուրքերին և կտիրեն այդ հողատարածքին, կամ նրանք պետք է վերացվեն թուրքերի կողմից... Իմ թուրքականությունը գերազանցեց իմ բժշկի կոչմանը: Իհարկե, իմ խիղճը տանջում է ինձ, բայց ես անկարող էի տեսնել իմ երկրի անհետացումը: Ես փակեցի աչքերս և շարժվեցի առանց վարանելու: Ինչ վերաբերում է պատմության առջև պատասխանատվությանը, ես նշանակություն չեմ տալիս նրան, թե ինչ են գրում այլազգի պատմաբաններն իմ մասին»[49]:

Այս ապամարդկայնացման դրսևորումներից էին հայ, հետագայում նաև հրեա զոհերին որպես բժշկական փորձարկման օբյեկտ օգտագործելու բազմաթիվ օրինակները: Վահագն Դադրյանը բերում է Մեհմեդ Հասանի օրինակը, ով մեղադրվեց աշխատանքային գումարտակի 2000 զինվորի սպանության մեջ, Ալի Սահիբի օրինակը, ով հազարավոր հայ երեխաների և կանանց էր սպանել՝ նրանց թույն ներարկելով Կարմիր խաչի հիվանդանոցներում և դպրոցներում, ինչպես նաև օգտագործելով բաղնիքները՝ զոհերին շոգիով սպանելու համար: Նա նաև բերում

---

[47] Hanioğlu Ş., The Young Turks in Opposition, Oxford University Press, New York, 1995, p.71.

[48] Hanioğlu Ş., Preparation for a Revolution: The Young Turks, 1902-1908, Oxford University Press, New York, p. 308.

[49] Հարցազրույց Իթթիհաթի գլխավոր քարտուղար Միդհատ Շուքրուի հետ (Բլեդա) Resimli Tarih, 5 July 1953, lmparator/ugun CokO§O (Istanbul: Remzi, 1979), pp. 57-9: Ռեշիդը օրագիր էր պահում, մանրամասնություններով արձանագրելով իր ամենօրյա աշխատանքը և իր մտորումները: Պատերազմի ժամանակ նա նույնիսկ հրատարակեց մի գրքույկ՝ «Ինչպես վարվել հայերի հետ» վերնագրով, որում նա արդարացնում էր հայերի ոչնչացումը Ժողովուրդի ձայն, 25 հունվար 1919 in Dadrian, Vahakn N., The Role of Turkish Physicians in the World War I Genocide of Ottoman Armenians, *Holocaust and Genocide Studies*, 1:2 (1986) p.175:

է վկայություններ, թե ինչպես են Երզնկայի հիվանդանոցում փորձարկումներ իրականացնում՝ հայ տեղահանվածներին ներարկելով տիֆով հիվանդների արյունը[50]:

Մաքրվելու, սանիտարական մաքրմանը ենթարկելու հղումներ

Ապամարդկայնացման ընթացքում բժշկական եզրույթներին զուգահեռ օգտագործվում էր բուժման, նաև սանիտարական մաքրման և հիգիենայի պահպանման անհրաժեշտության թեման: Այս գործողություններին վերաբերող բառապաշարը հաճախ կիրառվում էր քարոզչության, հռետորաբանության և նույնիսկ գրագրության մեջ՝ սպանությունների և կոտորածների բառացի հիշատակման փոխարեն:

Հիվանդության և այլասերման մետաֆորները նպաստում էին ապամարդկայնացման գործընթացին: Օրինակ՝ նացիստները հրեաներին անվանում էին «սիֆիլիս», «ժանտախտ», «տուբերկուլյոզ», «քաղցկեղ» և ներկայացնում էին իբրև վտանգավոր «բացիլներ», որոնք պետք է ամեն գնով վերացվեն: Այս որակումները տագնապ էին առաջացնում հասարակության մեջ և մղում սպանության՝ «բուժման», սեփական կյանքը, համայնքի բարեկեցությունը և նույնիսկ հենց գոյությունը պահպանելու համար:

Նացիստական բժիշկների մասին իր հետազոտության մեջ հանրահայտ հոգեբան Ռոբերտ Ջեյ Լիֆթոնը նշում է, որ սպանություններն իրականացվում էին բուժման անվան տակ: Չափազանցություն չի լինի ասել, որ ՍՍ բժիշկների յուրաքանչյուր գործողություն հղվում էր ինչ-որ ձևով բուժման վրա: ՍՍ-ական բժշկի համար մասնակցությունը սպանության գործընթացին հավասարվեց բուժման[51]:

Աուշվիցի համակենտրոնացման ճամբարում աշխատած բժիշկ Ֆրիթ Քլեյնը հայտնում էր, որ ինչպես «նա կհեռացներ հիվանդ մարմնից գանգրենայի ենթարկված հատվածը», նա հեռացրեց հրեաներին որպես «մարդկության մարմնի գանգրենային հավելված»: Այսպիսով, Քլեյնը հրեա ժողովրդի ոչնչացումը դիտում էր որպես «մարդկային կյանքի պահպանման թերապևտիկ հրամայական»52: Նույն կերպ, երբ թութսիները հայտարարվում էին ինյենզի՝ խավարասերներ, դա նույնպես թունատրման հատկանիշ էր կրում, քանի որ խավարասերները վա-

[50] Այս մասին տե՛ս Dadrian V., The Role of Turkish Physicians in the World War I Genocide of Ottoman Armenians, Holocaust and Genocide Studies, vol.1, no.2, 1986, pp.169-192, Հոլոքոստի ժամանակ բժշկական փորձարկումների մասին տե՛ս Annas George J., The Nazi Doctors and the Nuremberg Code: Human Rights in Human Experimentation, Oxford University Press, 1992, Baumslag N., Murderous Medicine: Nazi Doctors, Human Experimentation, and Typhus. Praeger Publishers, 2005, Lifton R., The Nazi Doctors: Medical Killing and the Psychology of Genocide, Basic Books, 2017.

[51] Lifton R., Medicalized Killing in Auschwitz, Psychiatry, 45, 1982, p.292, in Eric Markusen, *Genocide and Total War: a preliminary comparison, Genocide and the Modern Age. Etiology and Case Studies of Mass Death* (ed.by Isidor Wallimann and Michael N. Dobkowski), p.111.

[52] Tatz, “The Doctorhood of Genocide,” 89 ըստ Neilsen, Rhiannon S. "‘Toxification’ as a more precise early warning sign for genocide than dehumanization? An emerging research agenda," *Genocide Studies and Prevention: An International Journal*, Vol. 9, Iss. 1 (2015) p. 89.

բակներ տարածելու հատկանիշներ ունեն[53], և այդ պատճառով անհրաժեշտ էր նրանցից օր առաջ ազատվել:

Նման երևույթ նկատելի է նաև Հայոց ցեղասպանության ժամանակ: Այսպես, Օսմանյան կայսրության Բողազլյանի շրջանի տեղական հրամանատար Մուսթաֆան հեռագրում էր հինգերորդ բանակային կորպուսի հրամանատար Հալիլ Ռեքաիին այն մասին, որ «հայ պարագիտները/վնասատուները հավաքվել են գիշերն իրենց քաղաքներից և գյուղերից ու տեղափոխվել են նախատեսված վայրեր»[54]:

Սպանությունների նկարագրության բառապաշարը բժշկականով փոխարինելը հնարավորություն էր ստեղծում հոգեբանորեն մեղմելու այս ոճրի ուժգնությունը. ոճրագործը որոշակիորեն վերացարկվում է իրականությունից, իսկ նրա հոգեկան ապրումները մեղմացվում են:

Այս առումով շատ հետաքրքիր է Երկրորդ աշխարհամարտի ռազմաճակատից գերմանացի զինվորների՝ տուն ուղարկված նամակների բովանդակությունը: Նրանցում երևում է գերմանացի զինվորի հավատն իր առաքելությանը, այն է՝ մաքրել և «կարգի գցել» երկիրը: Նախնական որոշակի նպատակից այն վերափոխվել էր ավելի «բարձր» նպատակի՝ «վարակիչ», «սոցիալապես թունավոր» և «պարազիտ» հրեաներից երկիրը «հիգիենիկ մաքրման» ենթարկելու մակարդակի:

Մարդկային «կեղտից» ամբողջ շրջաններ մաքրելու գաղափարը չափազանց տարածված է գերմանացի զինվորների նամակներում, հատկապես պարտիզանների դեմ պայքարի նկարագրությունում: Այս գործողությունների վերաբերյալ կիրառվում է նույնիսկ հատուկ եզրույթ՝ «Sa¨uberungsaktion» (մաքրման գործողություն), «պարտիզաններով աղտոտված շրջաններ» և «տարածքների մաքրում» ձևակերպումները, որոնք հետագայում բնորոշում են որպես «հրեաներից մաքուր» («judenrein»)[55]:

Այս գաղափարները ձևավորվել էին նացիստական պաշտոնական քարոզչության թեզերի հիման վրա, որոնք առատորեն տարածվում էին գերմանական ԶԼՄ-ների միջոցով: Օրինակ՝ 1943 թ. մայիսի 16-ին Lippische Staatszeitung-ը գրում էր. «Բժշկի իրագործելիք խնդիրը խոլերայի ամբողջական վերացումն է, նույնատիպ ժողովրդի իրագործելիք խնդիրը պետք է լինի հրեաների լիակատար վերացումը»[56]: Բացի հասարակության մեջ տարածվող ամենօրյա քարոզչությունից, գերմանական բանակն իր զինվորներին հենց նման կարգախոսներ էր քարոզում:

---

[53] Neilsen, Rhiannon S. (2015) "'Toxification' as a more precise early warning sign for genocide than dehumanization? An emerging research agenda," *Genocide Studies and Prevention: An International Journal*, Vol. 9, Iss. 1, p.89.

[54] Ըստ Akçam, Taner, The Young Turks' Crime Against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire, Princeton University Press, 2012, p.201.

[55] Richter Tim C., "Die Wehrmacht und der Partisanenkrieg in den besetzten Gebieten der Sowjetunion," pp 837–857 ըստ Kipp Michaela, The Holocaust in the letters of German soldiers on the Eastern front (1939–44), *Journal of Genocide Research*, Vol.9, Iss.4 (2007), p.609.

[56] Lippische Staatszeitung, May 16, 1943 ըստ Kipp Michaela, The Holocaust in the letters of German soldiers on the Eastern front (1939–44), *Journal of Genocide Research*, Vol.9, Iss.4 (2007), p.608-609.

Այսպես, 1939 թ. գերմանական բանակում գաղափարական դաստիարակության նպատակով տպագրված մի ուսումնական գրքույկ հռչակում էր. «...մենք պայքարում ենք համաշխարհային հրեության («Weltjudentum») դեմ, քանի որ պետք է պայքարենք թունավոր պարազիտի դեմ: Մենք հարվածում ենք ոչ միայն մեր ժողովրդի թշնամուն, այլև բոլոր ժողովուրդներին պատուհասած ժանտախտին»[57]: Այս քարոզչությունը զինվորների կողմից մեծ ոգևորությամբ էր ընդունվում:

Կարծրատիպերը, որոնք նվազեցնում են զոհերի մարդկային էությունը, վերահսկողության հզոր տեխնոլոգիա են[58], և դրանց օգտակարությունը լավ գնահատված է տոտալիտար համակարգերում: Սպանությունն այս դեպքում սոցիալական հրամայական էր, հասարակության բուժում[59]: Ընդ որում նման թիրախ կարող էին դառնալ նաև ազգակիցները, եթե նրանք չէին տեղավորվում իշխող վերնախավի իդեալական հայրենակցի մասին պատկերացումների մեջ: Այսպիսին էր նացիստական Գերմանիայում իրականացված հոգեկան և ֆիզիկական խնդիրներ ունեցող մոտ 93 հազար քաղաքացիներին ոչնչացնելու քաղաքականությունը՝ այն պատճառաբանությամբ, որ նրանց «կյանքն արժանի չէ շարունակման»[60]:

Բառապաշարի այս փոփոխությունը նաև թույլ էր տալիս այս դաժան, արտառոց գործողություններին հաղորդել որոշակի կարգ՝ դրանով իսկ օգնելով զինվորներին կամ քաղաքացիական անձանց հաղթահարել պատերազմի և զինվորական տրամաբանությանը չհամապատասխանող գաղափարների[61] և գործողությունների բախման հետևանքով առաջացած անհանգստությունը:

Կամբոջայում իշխող կուսակցության թշնամիներին անվանում էին «միկրոբներ» և «պարազիտներ»[62]: Հայտարարվում էր. «Քանի որ ժողովրդական հեղափոխության կրակը և դեմոկրատական հեղափոխության կրակը անբավարար էին…

---

[57] Վերմախտի համար 1939թ. ստեղծված դասագիրք “Der Jude in der deutschen Geschichte,” Oberkommando der Wehrmacht, ed., Schulungshefte fu¨r den Unterricht u¨ber nationalsozialistische Weltanschauung und nationalpolitische Zielsetzung (Berlin: Zentral verlag der NSDAP, 1939) ըստ Kipp Michaela, The Holocaust in the letters of German soldiers on the Eastern front (1939–44), *Journal of Genocide Research*, 9:42007, 608-609).

[58] Fiske, S. T.: 1993, 'Controlling Other People: The Impact of Power on Stereotyping', American Psychologist 48, 621-628 ըստ Pina e Cunha Miguel, Rego Arménio and Stewart R. Clegg, Obedience and Evil: From Milgram and Kampuchea to Normal Organizations, , *Journal of Business Ethics*, Vol. 97, No. 2 (2010), pp. 301.

[59] Um, K., 1998, The Broken Chain: Genocide in the reconstruction and De-struction of Cambodian Society', Social Identities 4, pp.131-154 ըստ Pina e Cunha Miguel, Rego Arménio and Stewart R. Clegg, Obedience and Evil: From Milgram and Kampuchea to Normal Organizations, *Journal of Business Ethics*, Vol. 97, No. 2 (2010), pp. 301

[60] Burleigh Michael and Wippermann Wolfgang, The Racial State: Germany 1933-1945(Cambridge, Cambridge University Press), p.153 in Valentino Benjamin A., Final Solutions: Mass Killing and Genocide in the 20th Century, Cornell University Press, 2005, p.20.

[61] Kipp Michaela, The Holocaust in the letters of German soldiers on the Eastern front (1939–44), Journal of Genocide Research, Vol.9, No.4, 2007, pp.608-609.

[62] Short, P.: 2004, Pol Pot: The History of a Nightmare (John Murray, London), p.254 ըստ Pina e Cunha Miguel, Rego Arménio and Stewart R. Clegg, Obedience and Evil: From Milgram and Kampuchea to Normal Organizations, *Journal of Business Ethics*, Vol. 97, No. 2 (2010), p.300.

մենք անհաջողությամբ փնտրում ենք միկրոբներ կուսակցության մեջ: Նրանք թաքնված են: Մեր սոցիալիստական հեղափոխությունը զարգացման հետ կթափանցի կուսակցության յուրաքանչյուր անկյուն, բանակ և ժողովրդի մեջ, մենք կբացահայտենք այդ վտանգավոր միկրոբներին»[63]:

Նման մտայնությամբ համակված էր նաև երիտթուրքական վերնախավը: Պրինսթոնի համալսարանի պրոֆեսոր Շյուքրու Հանիօղլուն նշում է, որ երիտթուրքական շարժման հիմնադիրները տարբերություն չէին դնում կենսաբանական և սոցիալական միավորների միջև: Նրանց հիմնադիր հայրերից մեկը՝ Ահմեդ Ռիզան, բացատրում էր դա հետևյալ կերպ. «...հասարակությունը բարդ օրգանիզմ է, որը հիմնված է միայն բնական օրենքների վրա: Այս մարմինը ենթարկվում է ցիկլային հիվանդությունների»: Նրա խոսքերով սոցիալական խնդիրները կարող են բժշկվել գիտական մեթոդների կիրառմամբ[64]: Հետաքրքիր է, որ նման մտածողությունը համատարած էր նրա միջավայրում: Այսպես, նրա հակառակորդներից մեկը 1897-ին նույն Ահմեդ Ռիզային Իթթիհաթից արտաքսումը նկարագրեց որպես «Կոմիտեի մարմնից գանգրենայի ենթարկված օրգանի անդամահատում/ամպուտացիա»[65]:

Երիտթուրքերի այս ծայրահեղ կենսաօրգանական նյութապաշտական հայացքները մեծապես ազդված էին այս ուղղության հայտնի ներկայացուցիչներ Ռենե Ուրմսի[66] և Յակով Նովիցքիի[67] գործերից: Երիտթուրքերը ձգտում էին կառուցել սեփական հեղափոխական պրակտիկան՝ օգտագործելով կենսաօրգանիկ տեսությունների հիմնավորումները: «Հասարակությունը նման է մարդու մարմնի, քանի որ յուրաքանչյուրն ունի բազմազան և բազմաթիվ կենդանի բջիջներ: Ինչպես անհատին է անհրաժեշտ թերապիա՝ վերականգնվելու համար հիվանդությունից, այնպես էլ հասարակությունը պետք է բուժվի իրեն հատուկ հիվանդություններից: Որպես բժիշկներ հանդես են գալիս օրենսդիրները, վարչարարները և քաղաքական գործիչները: Եթե հասարակությունն առանց նման բժիշկների է, կամ նրանց ներկայության դեպքում նույնիսկ ճնշող խումբը համարձակվում է խախտել գոյություն ունեցող կարգի հավասարակշռությունը և հաջողության շնորհիվ հասնում է ուժեղ իշխանության ...այդպիսի վտանգավոր հիվանդությունը անշուշտ վատ հետևանքների կբերի, և ազգը փրկելու միջոցը բռնության ենթարկված մարդկանց ապստամբությունն է ճնշողների դեմ: Ապստամբությունը միակ միջոցն է, որում թույլ և հիվանդ ազգը կարող է բուժել ինքն իրեն»[68]:

---

[63] Chandler, D.: 1999, Brother Number One: A Political Biography of Pol Pot (Westview, Boulder, CO), p.129 ըստ Pina e Cunha Miguel, Rego Arménio and Stewart R. Clegg, Obedience and Evil: From Milgram and Kampuchea to Normal Organizations, *Journal of Business Ethics*, Vol. 97, No. 2 (2010), p.300.

[64] Ahmed Riza, Layiha, 17 ըստ Hanioğlu Ş., The Young Turks in Opposition, p.208.

[65] Magmumi, Hakikat-i Hal, 4 ըստ Hanioğlu Ş., The Young Turks in Opposition, p.208.

[66] Organicisme et societe (Paris, 1896) և Philosophie des sciences sociales, 3 vols. (Paris, 1903-1907).

[67] La guerre et ses pretendus bienfaits, La critique du darwinisme social (Paris, 1910)

[68] "Kiyam," Osmanh, no. 5, February 1, 1898, 5, ըստ Hanioğlu Ş., The Young Turks in Opposition, p.208.

Այսպիսով, ցեղասպանության ճարտարապետները հնարավոր մարդասպաններին մղում են սպանությունների՝ հռչակելով, որ այդ ճանապարհով «մաքրում են ազգը, ռասան», «վերացնում են ազգի մարմնում գոյացած քաղցկեղը»՝ ապամարդկայնացնելով զոհերին և արժեզրկելով թիրախ խմբին: Հետաքրքիր է, որ այս ամենի մեջ կա երկակի մի ուղերձ: Մի կողմից՝ զոհ խումբն ընկալվում է որպես ուժեղ (վտանգ, սպառնալիք), մյուս կողմից՝ թույլ (նրանց կարելի է հեշտությամբ ոչնչացնել)[69]:

Ապամարդկայնացման ձևերը

Ապամարդկայնացումն արտահայտվում էր ոչ միայն հոետորաբանության մեջ, այլ նաև ոճրագործների կողմից ցեղասպանության ընթացքում իրականացված գործողություններով, երբ զոհերին շարունակաբար փորձում են զրկել մարդկային արժանապատվությունից: Զոհերը երկարատև ճնշման և բռնության արդյունքում հետզհետե փոխակերպվում էին՝ կորցնելով մարդկային կերպարանքը: Այս ապամարդկայնացումը կարող է դրսևորվել շատ տարբեր ձևերով:

Հայոց ցեղասպանության ժամանակ ապամարդկայնացմանը նպաստում էր տեղահանությունը: Երկար օրեր և ամիսներ կիզիչ արևի տակ, մշտական հարձակումների ենթարկվելով, առանց բավարար սնունդի և ջրի, քայլելով հազարավոր կիլոմետրեր, մարդիկ, նույնիսկ հասնելով սիրիական անապատներում իրենց համար հիմնված ճամբարները, արդեն իսկ կորցնում էին մարդկային կերպարանքը: Ճանապարհին նրանց հաճախ նույնիսկ չէին թողնում քաղաքներ կամ այլ բնակավայրեր մտնել՝ համարելով, որ իրենց հետ կբերեն հիվանդություններ և համաճարակ, նաև քանի որ նրանց կմախքացած, անմարդկային տեսքը վանում էր քաղաքների բնակչությանը: Հաճախ ապամարդկայնացնելու նպատակով տեղահանվողներին, հատկապես կանանց մերկացնում և ստիպում էին ճանապարհն անցնել մերկ վիճակում: Բացի դրանից, իրենց և իրենց երեխաների համար ուտելիք հայթայթելու նպատակով նրանք մշտական պայքարի մեջ էին գտնվում մյուս տեղահանվածների հետ, ինչը մեծացնում էր նաև ներխմբային թշնամանքը: Տեղահանության ժամանակ հանդիպում էին նույնիսկ դիակերության և մարդակերության դեպքեր, ինչն իջեցնում էր զոհերին քաղաքակրթական սանդղակի մի քանի աստիճան ներքև[70]:

Այդպիսի ապամարդկայնացումը նաև որոշակիորեն մեղմում էր մինչցեղասպանական ժամանակներում հայերի հաջողությունների նկատմամբ մուսուլմանների մեջ գոյություն ունեցող խանդը և բարդույթը, երբ նախկինում հաջողակ և բարեկեցիկ հայերն արդեն կորցնում էին մարդկային կերպարանքը:

---

[69] Encyclopedia of Genocide and Crimes against Humanity (ed. Shelton Dinah), Macmillan Reference USA, 2004, p.839

[70] Տե՛ս Геноцид армян в Османской империи: Сб. документов и материалов: Сост. М. Г. Нерсисян, Р. Г. Саакян; Ер., Изд-во АН АрмССР, 1966, The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916: Documents Presented to Viscount Grey of Falloden by Viscount James Bryce and Arnold Toynbee, Uncensored Edition. Ara Sarafian (ed.) Princeton, N.J., Gomidas Institute, 2000

Ապամարդկայնացման տարրեր էին պարունակում նաև հայ զինվորներին զինաթափելուց հետո աշխատանքային գումարտակներ տեղափոխելը և այն վերաբերմունքը, ինչին նրանք արժանանում էին: Մորգենթաուն գրում է. «Ծառայելու փոխարեն իրենց երկրին իբրև հրետանավոր կամ հեծելազորային, այս նախկին զինվորները հանկարծ բացահայտեցին, որ վերածվել էին ճանապարհաշինարար բանվորների և բեռնակիր անասունների»[71]:

Հոլոքոստի ժամանակ նույն արդյունքն էր ապահովվում, երբ հրեաներին հավաքում, հաշվառում և տեղափոխում էին կենդանիների համար նախատեսված գերբեռնված գնացքներում, առանց հացի, ջրի կամ բնական կարիքները հոգալու հնարավորություն տալու, տեղավորում գերբնակեցված գետտոներում, որտեղ մի ընտանիքի հատկացվում էր մեկ սենյակ, անկախ ընտանիքի անդամների թվից, նրանց աշխատեցնում էին անմարդկային պայմաններում, նրանց նկատմամբ սարսափելի փորձարկումներ էին իրականացնում և սպանում «ինդուստրիալ եղանակով»՝ օգտագործելով գազային խցիկները և այրելով իսպառ ոչնչացնում դիակները: Դրան էր ուղղված նաև ճամբարներում, մասնավորապես Աուշվիցում գերիներին անուններից զրկելը, երբ նրանք անունների փոխարեն ստանում էին համարներ:

Համակենտրոնացման ճամբարն ինքն ապամարդկայնացման մի կարևորագույն միջոց էր: Այս համակարգված ապամարդկայնացման մասին Աուշվիցի ճամբարի հայտնի բանտարկյալ Պրիմո Լևին գրում է. «Ճամբարը մի մեծ մեքենա էր, որի նպատակն էր մեզ իջեցնել կենդանիների մակարդակի»[72]: Նացիստական համակենտրոնացման ճամբարներում բանտարկյալների հանդեպ մշտապես կիրառվում էին սահմոկեցուցիչ գործողություններ, նրանց նվաստացնում էին այն աստիճան, մինչև որ կալանավորները զրկվում էին մարդկային տարրական արժանապատվության զգացումից, ինչն անհրաժեշտ էր դիմակայելու նացիստների դաժան վերաբերմունքին[73]: Այսպիսի ապամարդկայնացման գագաթնակետն էր զոհի կողմից դիմադրության դադարեցումը, երբ նա արդեն թույլ էր տալիս անել իր հետ այն ամենը, ինչ կցանկանար դահիճը: Կարելի է ասել, որ այդ պահին անձի ինքնապատկերը բառացիորեն անմարդկային էր դառնում: Զոհը դադարում էր ինքն իրեն ընկալել իբրև մարդկային էակ[74]: Հաճախ նշվում է, որ ապամարդկայնացման գործընթացն անցած զոհերը յուրահատուկ ռոբոտներ են դառնում՝ համակենտրոնացման ճամբարներում դրսևորելով անձնական բոլոր հատկանիշներից զուրկ վարքագիծ[75]:

Այսպիսով, ապամարդկայնացումը կարևորագույն գործոն է՝ ցեղասպա-

---

[71] Ambassador Morgenthau's story by Morgenthau, Henry, 1918, Garden City, N.Y., Doubleday, p.302

[72] Levi, P. Survival in Auschwitz.. New York: Collier Books, Macmillan Publishing Company, 1961, p.36

[73] Totten Samuel and Bartrop Paul R., Dictionary of genocide by, Greenwood, 2007, pp.103-104.

[74] Նույն տեղում, էջ 104:

[75] Տե՛ս Grey, C. and C. Garsten, Organized and Disorganized Utopias: An Essay on Presumption, in M. Parker (ed.), Utopia and Organization, Blackwell, Oxford, 2002, pp. 9-23, Pina e Cunha Miguel, Rego Arménio and. Clegg Stewart R, Obedience and Evil: From Milgram and Kampuchea to Normal Organizations, *Journal of Business Ethics*, Vol. 97, No. 2 (2010), pp. 301.

նություններն իրականացնելու համար: Թիրախ խմբի նպատակաուղղված զրկումը մարդկային հատկանիշներից վերացնում է իր տեսակի սպանության անթույլատրելիության հետ կապված այն պատնեշները, որոնք կառուցված են մարդկային հասարակության դարավոր ավանդույթների ուժով, ինչպես նաև կրոնական գաղափարախոսությունների ազդեցության տակ: Ապամարդկայնացման հաջորդ փուլում թունատրման հետևանքով զոհերը սկսում են ընկալվել ոչ միայն իբրև ոչ մարդկային էակներ, այլև վտանգավոր և սպանության արժանի:

ԱՊԱՄԱՐԴԿԱՅՆԱՑՄԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Սուրեն Մանուկյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Ապամարդկայնացումը կարևորագույն գործոն է ցեղասպանություններն իրականացնելու համար: Թիրախ խմբի նպատակաուղղված զրկումը մարդկային հատկանիշներից ջնջվում է մարդասպանության նկատմամբ գոյություն ունեցող բարոյական արգելքներն ու պատնեշները: Զոհը ապամարդկայնացման հետևանքով կորցնում է մարդկային հատկանիշները, անհատականությունն ու սկսում ընկալվել իբրև կենդանի (կապիկ, առնետ, շուն), միջատ (տզրուկ, խավարասեր) կամ վնասարար և վտանգավոր ինչ-որ երևույթ (վիրուս, բացիլ, հիվանդություն ծնող մանրէ, վնասատու, քաղցկեղ):

Ապամարդկայնացման հաջորդ փուլում թունատրման հետևանքով զոհերը սկսում են ընկալվել ոչ միայն իբրև ոչ մարդկային էակներ, այլև վտանգ և սպանության, «մաքրման», ոչնչացման արժանի:

THE PHENOMENON OF DEHUMANIZATION IN GENOCIDE IMPLEMENTATION

Suren Manukyan

SUMMARY

Dehumanization is a crucial factor in the implementation of genocides. The targeted deprivation of the victim group from the human features is the eradication of existing moral limitations to human killing. In the result of dehumanization, the victims lose human characteristics, personality, and begin to be perceived as animals (monkeys, rats, dogs), insects (leeches, cockroaches) or harmful and dangerous objects (virus, bacilli, bacterium, parasite, cancer).

At the next stage of toxification, victims begin to be identified not only as non-human beings but also threats, deserving of "cleaning", destruction and killing.

Keywords: Дегуманизация, психология геноцида, пропаганда ненависти, токсификация.

ФЕНОМЕН ДЕГУМАНИЗАЦИИ В ПРОЦЕССЕ ОСУЩЕСТВЛЕНИЯ ГЕНОЦИДА

Сурен Манукян

РЕЗЮМЕ

Дегуманизация является решающим фактором в процессе осуществлении геноцида. В результате целенаправленного лишения жертвы человеческих черт исчезают также существующие моральные барьеры и психологические препятствия для убийства людей. Вследствии дегуманизации жертва теряет человеческие характеристики, личность и начинает рассматриваться в качестве животного (обезьяны, крысы, собаки), насекомых (пиявки, тараканы) или вредных и опасных явлений (вирусы, бациллы, бактерии, вредители, раковые клетки).

На следующем этапе дегуманизации – токсификации, жертв начинают воспринимать не только как нелюдей, но и в качестве угрозы заслуживающей «чистки», уничтожения, убийства.

Ключевые слова: Дегуманизация, психология геноцида, пропаганда ненависти, токсификация.